ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով Հայաստանի նկարիչների միության ղեկավարի գրությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով (ստեղծագործական արվեստանոցներ) տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 2.469.647 դրամ գումարի չափով, /ապառք՝ 1.880.256 դրամ, տույժ՝ 589.391 դրամ/՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով (ստեղծագործական արվեստանոցներ)՝ 01.12.2012թ. դրությամբ գույքահարկի գծով հարկային պարտավորությունները կազմում են 2.469.647 դրամ /ապառք՝ 1.880.256 դրամ, տույժ՝ 589.391 դրամ/, որի համար 12.11.2012թ. հ. 185 գրությամբ Հայաստանի նկարիչների միության նախագահը դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչները գտնվում են ֆինանսական սուղ պայմաններում և ունեն բազում չլուծված խնդիրներ՝ այդ թվում գույքահարկի գծով չկատարված հարկային պարտավորություններ:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասով սահմանվում է, որ հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը՝ ինչպիսին է նկարիչների արվեստանոցը, համարվում է հասարակական նպատակային նշանակության շինություն, և սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն սահմանվում է միևնույն հարկման դրույքաչափը (կադաստրային արժեքի 0.3%) ինչպիսին է խաղատների, սուպերմարկետների և գերշահույթ ապահովող այլ հասարակական նպատակային նշանակության շինությունների համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով «Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.2

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմանբ Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի "_____"
N ____ Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀՆՄ անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների (ստեղծագործական արվեստանոցների) գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ

ՀՀ	Վարչական շրջան	Ազգանուն, Անուն փաստ. սեփ.	Հասցե	ՀՎՀՀ	շին. նպատ. նշանակ/ գր. Ամսաթիվ	Գույքահարկի պարտավորություններ առ. 31.12.2012		
						ապառք	տույժ	Ընդամենը
1	Աջափնյակ	Փաշոյան Նարգիզ	Լենինգրադյան 32/14-15	83832698	հաս. 02.02.2007	29,415	13,118	42,533
2	Աջափնյակ	Ակնունի Արմենակ	Լենինգրադյան 4/28	83686557	հաս. 14.12.1992	89,240	39,891	129,131
3	Աջափնյակ	Շահինյան Լիպարիտ	Շինարարների 4	L0004206	հաս. 09.09.2003	5,750	259	6,009
4	Աջափնյակ	Վարդանյան Լավրենտ	Արզումանյան 20	L0004187	հաս. 25.12.1992	7,646	4,186	11,832
5	Արաբկիր	Առուշանյան Նարեկ	Քոչար 13 / 48	G0003545	հաս. 31-12-2003	35,873	1,614	37,487
6	Արաբկիր	Բաղդասարյան Գետիկ	Քոչար 13 / 6	G0002412	հաս. 27-01-2009	35,247	3,455	38,702
7	Արաբկիր	Բոյաջյան Աիդա	Քոչար 13 / 33	G0004113	հաս. 31-12-2003	28,070	1,263	29,333
8	Արաբկիր	Գալենց Սարո	Քոչար 13 / 52	80735497	հաս. 27-08-2003	34,681	1,561	36,242
9	Արաբկիր	Գալստյան Վահագն	Քոչար 13 / 37	G0004142	հաս. 15-10-2004	28,116	1,265	29,381
10	Արաբկիր	Գասպարյան Էդիկ Գասպարյան Էդուարդ	Քոչար 13 / 88	G0002381	հաս. 21-04-2004	35,466	1,596	37,062
11	Արաբկիր	Խաչատրյան Զաքար	Քոչար 13 / 74	G0004267	հաս. 19-07-0094	35,873	1,614	37,487
12	Արաբկիր	Կարգանյան Նորայր	Բաղրամյան 50/1	G0013179	հաս. 26-02-2007	23,244	7,898	31,142
13	Արաբկիր	Կարգանյան Նորայր	Բաղրամյան 50/50ա	80343333	հաս. 31-12-2004	21,516	7,109	28,625
14	Արաբկիր	Հախյան Լևոն	Քոչար 13 / 104	80813551	հաս. 31-12-2004	34,631	1,558	36,189
15	Արաբկիր	Հակոբյան Տարիել	Կոմիտաս 11	80344499	հաս. 31-12-2004	7,313	329	7,642
16	Արաբկիր	Հարությունյան Հովհաննես	Քոչար 13 / 62	80728897	հաս. 31-12-2004	23,629	1,063	24,692
17	Արաբկիր	Հովհաննիսյան Քնարիկ Գաբրիելյան Միքայել	Քոչար 13 / 75	G0010138	բն. 16-08-2006	4,691	211	4,902
18	Արաբկիր	Հովսեփյան Արտաշես	Գյուլբեկյան 33	G0003881	հաս. 31-12-2003	25,078	2,948	28,026
19	Արաբկիր	Ղազարյան Սամվել	Քոչար 13 / 10	G0003731	հաս. 31-12-2003	31,992	1,440	33,432
20	Արաբկիր	Մինասյան Յուրի	Հ.Հակոբյան 2	G0004353	հաս. 01-07-2005	-	1	1
21	Արաբկիր	Սիրավյան Գագիկ	Փափազյան 17ա/56	80805546	հաս. 31-12-2004	16,293	733	17,026
22	Կենտրոն	Աղամյան Կարեն	Կորյունի 1նրբ. 10 բն.2/1	84724988	հաս. 11.03.2008	126,978	56,836	183,814
23	Կենտրոն	Աղամյան Կարեն	Քաջազնունի փող. Հ.9	86656452	հաս. 26.11.2003	95,020	42,474	137,494
24	Կենտրոն	Քոլոզյան Արմեն	Դեմիրճյան 27 շենք բն. 32Ա	87063243	հաս. 11.08.2006	17,453	785	18,238
25	Կենտրոն	Կիրակոսյան Արշալույս	Սարյան 20/1	84819192	հաս. 24.03.1993	140,030	62,592	202,622
26	Կենտրոն	Սարգսյան Բաղդասար	Սարյան 20/1	84702446	հաս. 28.04.1993	122,865	54,922	177,787
27	Կենտրոն	Ստեփանյան Գագիկ	Բաղրամյան 1փակ. 26 շենք	80759615	հաս. 23.11.1992	64,712	2,912	67,624

28	Կենտրոն	Գրիգորյան Մասիս	Մայիսյան փող. Հ.33Ա	B0005482	հաս. 22.08.2005	91,784	40,502	132,286
29	Կենտրոն	Գրիգորյան Վանյա	Նար-Դոս փող. 73 շենք	B0002471	հաս. 29.12.2004	51,672	2,325	53,997
30	Կենտրոն	Կարսյան Էդուարդ	Սարյան փող. 40 շենք	84594447	հաս. 06.03.1993	62,424	2,809	65,233
31	Կենտրոն	Շահումյան Հաղթանակ	Իսրայելյան փ. 37 շենք	86809224	հաս. 26.06.2006	63,084	18,689	81,773
32	Կենտրոն	Սարգսյան Ռաֆիկ	Սարյան 20/1	84824681	հաս. 06.03.1993	46,410	13,748	60,158
33	Կենտրոն	Խոջոյան Արմեն	Մաշտոցի պող. 6 24Բ բն.	87043986	հաս. 10.07.2001	80,120	35,813	115,933
34	Մալաթիա-Սեբաստիա	Հակոբյան Հրաչյա	Բաբաջանյան փ. 53 շենք	85582472	հաս. 22.02.2002	49,175	22,140	71,315
35	Մալաթիա-Սեբաստիա	Մկրտչյան Մկրտիչ	Բաբաջանյան փ. 49/1 շենք	85336377	հաս. 22.02.2003	182,492	124,308	306,800
36	Մալաթիա-Սեբաստիա	Հովսեփյան Ալբերտ	Բաբաջանյան փ. 81 շենք բն.18	85351842	հաս. 16.11.1992	8,386	377	8,763
37	Մալաթիա-Սեբաստիա	Հարությունյան Յուրի	Ռաֆֆու փող. 33 շենք բն 42	F0001572	հաս. 23.11.1992	22,062	993	23,055
38	Մալաթիա-Սեբաստիա	Վարդանյան Էդիկ	Բ-2 Թաղ. 132 շենք բն.18	85476734	հաս. 01.07.1995	8,883	400	9,283
39	Մալաթիա-Սեբաստիա	Անդրեասյան Կարեն Եղիազարյան Կարեն	Իսակովի պող. 34 շենք 19 բն.	85489426	հաս. 24.11.1992	21,323	5,637	26,960
40	Մալաթիա-Սեբաստիա	Բաղալյան Աշոտ	Իսակովի պող. 42 շենք 1 հարկ	F0009294	հաս. 10.09.2007	14,665	660	15,325
41	Մալաթիա-Սեբաստիա	Ղազարյան Գագիկ	Բ-2 Թաղ. 51 շենք բն.1	85112914	հաս. 25.10.2005	19,586	881	20,467
42	Մալաթիա-Սեբաստիա	Միսկարյան Կարինե	Բ-1 Թաղ. 32 շենք բն.18	85346912	հաս. 21.12.1994	8,553	385	8,938
43	Նոր Նորք	Ռիզեր Վովա	VI մ/շ, 5 շենք	C0004133	հաս. 19.04.1993	4,813	217	5,030
44	Քանաքեռ-Զեյթուն	Ավետիսյան Ավետիք	Ա.Ահարոնյան 20/50	D0006053	հաս. 31.12.2004	19,216	5,659	24,875
45	Քանաքեռ-Զեյթուն	Պետրոսյան Դավիթ Գրիգորյան Լիա	Ա.Ահարոնյան 16	D0003790	հաս. 31-12-2004	4,786	215	5,001
ԸՆԴԱՄԵՆԸ						**ապառք**	**տույժ**	**Ընդամենը**
						1,880,256	**589,391**	**2,469,647**